

ջին սուտը, որ պիտի տագալի հրաշաղօր ուղիղին հանդէպ, որչափ աննշան ալ ըլլայ աս: 'Իարձեալ' գիտնական ու համեմատական նեղ խելամոտ թիւնները կշիռ ալրիւր դնելով մշտօրեայ շահերու՝ պէտք է յանձնել մնացածը ներքին ու արտաքին պատեհութեան ու տեւել անվնաս, առաջինն հաշուելով միշտ, երկրորդէն յուսալով և զգուշանալով հաւասար շրջահայեցութեամբ:

Ինչպէս Լահէյեան Իրիսով՝ խաղաղութեա՛ն դար մը կերևի Ձորդ դարը, նոյնպէս պայքարի դար մը եղաւ ըստ մեծի մասին՝ Գրդ դարը, Մեծն Նարոլէոնէն մինչև Լորտ Բոպէրդան 'ի Թրանսվալ:

Եւ այս պայքարը, զոր կապիկ ու աշխարհիկ իմաստասիրութիւն մը նոյնիրագործեց կեանքի պայքար անուանով, բնական էր որ մուտ գործէր վաճառականութեան ալ մէջ: Հայ վաճառականք ալ նմանողաբար ետ չմնացին այդ պայքարի մասին, և լծուելով ասիական հրապարակներու մէջ տիրող կիրքերուն և խորագիտութեանց՝ եղաւ ան նախանձաւորութենէ տարբեր յոյժ տարբեր մախացող պայքար մը: Նախանձիլ ընկերին յաջողութեանց և հարստութեանց վրայ, զայն ընկճել բամբասել քուն գլխի ջանալ բարի միջոցներով, վարկարեկ ընել, քարընդօտնել, վերջապէս ետ ձգել ու վնասել՝ ընդհանրապէս ա՛յս եղանակով ըմբռնուեցաւ և գործադրեցաւ Հայոց մէջ այդ պայքարը: Հարկ է ըսել՝ որ այդպիսի կոխի մը արդիւնքն ալ չեղաւ օգտակար բան մը, և այսօր անկեալ տուներու և հարստութեանց զէթ քառորդին կործանման պատճառն է այդ անընկերակա՛ն մախանքը:

Այլ մենք կրօնք՝ ի՛նչ փիլիսոփայութեամբ ալ որ գեղերեսուի, կապիկ թէ սկեպտիկ, պայքարն էապէս լաւ բան մը չէ թէ՛ առանձնական թէ՛ հանրական տեսակէտով, քանի որ միշտ կենթադրէ սկզբամբ միուն